

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա.Գ.ՊԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՉ

Պրոֆ. Մառը՝ իւր խմբագրութեամբ հրատարակուող Христианский Востокъ* գիտնական թերթի առաջին պրակում՝ Слѣдь 'αγάπη у Армянъ վերնագրով մի փոքրիկ յօդուածում՝ այն միտքն է արծարծում թէ Հայոց մէջ յայտնի չէ ոչ «ազապ» բառի գործածութիւնը, ոչ նրա թարգմանութիւնը և ոչ հաստատութեան գոյութիւնը, ինչպէս յունաց և վրաց մէջ սովորական էր: Առաջին անգամ «ազապ»-ի թարգմանութիւնը «սէր» բառով և հաստատութեան գոյութիւնը նա տեսնում է Հոռոմոսի վանքի մի արձանագրութեան մէջ՝ 1229 թ. զրուած: Միակ բացառութիւն համարում է «Վարբ Հարանց»-ի մէջ «սէր տանել» դարձուածի դրական գործածութիւնը ազապի մըտքով: Այդ հանգամանքը առիթ է տալիս նորան հարցնելու թէ ի՞նչու միայն ժԿ. դարումն է այդ բառը գործադրում Հայոց մէջ և հաստատութիւնը երևան գալիս Անիի մօտ գտնուած Հոռոմոսում և թէ արդեօք այդ երևոյթը հայ քաղկեդոնականութեան ազդեցութեամբ չէ վերակենդանացել:

Յարգելի գիտնականի հարցին պէտք է պատասխանենք, թէ միայն Անիի մօտ գտնուած Հոռոմոսում չէ երևում այդ բառի գործածութիւնն ու հաստատութեան գոյութիւնը՝ այլ և Կեչառուաց, Հաղբատի և ուրիշ վանքերի արձանագրութիւնների մէջ: Դոցանից հնագոյնը Կեչառուաց վանքի ժամատան հարաւային պատի արձանագրութիւնն է.

Ի Ո՛ր՞ թու. Կամաւն ա՞յ ես Վաչէ որդի Սարգսի որդո Վաչուտի եւ ամուսին իմ | Մամախաթուն եւ որդիք իմ Բուրդս եւ

* Христианский Востокъ. Серия, посвященная изучению христианской культуры народовъ Азии и Африки. Томъ I. Выпускъ I. Изданіе Имп. Академіи Наукъ. СП. 1912.

Վաչուտ միաբանեցաք ի ս^ր ուխտս կէչա ուես | եւ տուաք ի գան-
 ձագին գեղն մեր շէնգաւիթ այգի | սպասք էկեղէցո եւ տ^ր դրի-
 գորիս եւ գրիգոր վարդապետս զծառղարդարին պատարագն ինձ
 վաչէի եւ զղազարոյն մամախաթունին եւ զնոր կիրակեին քրդին
 ամէն էկեղեցիքս եւ ով առաջնորդ լինի զսեռն առնե նոր կիրա-
 կեին * անխափան:

Ուշադրութեան արժանի է, որ այստեղ ևս նոյն Վաչէ
 իշխանն է «սէր առնել» պատուիրողը, ինչպէս և Հոռոմո-
 սուտի միայն աւելի վաղ:

Աւելի որոշ է արտայայտուած սէր կամ ազապ անելու
 սովորութիւնը Հաղբատի մի արձանագրութեան մէջ **.

Կամաւն Աստուծոյ եւ Գրիգոր եղբայր տեառն Համազասպայ
 առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատայ մեծ յուսով ապաւինեցայ
 ի սուրբ նշանս. և զիմ հոգւոյ բաժին գիւղն որ գանձով գնեալ էի
 Թաղիաղինին որդեացն ի Սարգսէ զԱկուաւաձորն, որ կոչի Մամ-
 խուտ, ետու ի սուրբ նշանս ազապ փրկութեան հոգւոյ իմոյ կա-
 մակցութեամբ վարդապետացս. և ամէն եղբայրութիւնս ընկալան,
 սանմանեցին ամէն եկեղեցիքս յիմ անուն պատարագել զԲ^ա ի նոր
 կիրակէի երկու պատարագ Մամքանայ իմ կենակցին և այլն ինձ.
 և զսեղանն յիմ անուն գնեն որպէս զՆանային. արդ եթէ որ զսեռ
 եւ զժամն խափանե, ի յաբալական սեղանացն զրկեալ եղիցի, իմ
 մեղացն պարտական է առաջի Աստուծոյ:

Նոյն միտքն է արտայայտուած Հաղբատի մի այլ ար-
 ձանագրութեան մէջ, Մամախաթունի անունով, գուցէ և
 Դսեղի սուրբ Գրիգորի «Աշոտ որդի Գորգէի» արձանագրու-
 թեան մէջ ***. Համ. նաև Ազգ. Հանդ. X. եր. 27 Սարգսի
 արձանագրութիւնը:

Սակայն «ազապ» բառի գործածութիւնը, ինչպէս և
 Հաստատութիւնը անպայման գոյութիւն է ունեցել Հայոց
 եկեղեցու մէջ շատ աւելի վաղ ժամանակներից: Այսպէս
 ս. Սահակ Պարթևի անունով մեզ հասած կանոնների մէջ
 պատուիրում է քահանաներին միաբան կատարել «զպաշ-
 տօն», և զպատարագ ազապացն առանց աւետարան կար-

* Ընդգծումները մերն են: Համ. Ալիշան Այր. եր. 261.

** Ջալալեան. Ճանապ. Ա. 75:

*** Անդ. 74 և 114:

դալոյ մի իշխեցոցեն մատուցանել: Ծինականները, «որ յազաւ
հրաւիրեցան» պատարազից առաջ չպէտք է հաց ուտեն:
Ժողովուրդը պէտք է նախնեաց կողմից ազապի համար
կարգած ընծաները սիրով մատուցանէ*: ԽԱ. կանոնից
երևում է ազապի հաստատութեան ձևակերպութիւնը
նախնի Հայոց մէջ.

Ազապն որ մասնակաւ է**, կէս կաշւոյն երթիցէ ի վանսն
և Բ. մասունք ճրագունին, իսկ քահանայիցն բաւանդակն և ոչխարի
մորթն և դմակն անդամովն և ճրագուն. և խախացոցն, և պան-
դուխտ, որ ի տունս քահանայից են, և նոցին եղբարց նոյնպէս
տայցեն, և գամենայն պատարագս հասարակաց կերիցեն պատեա-
լենայք եւ աղմոսք բազում մեծաբանաւք, և եղբարք հաւատացեալք
և զհաց տօնի նորեացն*** առ հասարակ կերիցեն ամենայն պաշ-
տանեայք, նոյնպէս զհաց ապաշխարողացն, զոր յաւուրս քառաս-
նորդացն առնեն հանգիստ շարաթու կամ կիրակէի †:

Եթէ նոյն իսկ ժխտելու լինենք ս. Սահակի անուան
հետ կապուած կանոնների վաւերականութիւնը, դորանով
չի հերքւում ազապի հաստատութեան գոյութիւնը, որով-
հետև նոյն կանոնների իմաստը կրկնւում է և յետագայ
ժողովների որոշումների մէջ †*: Ներսէս Բ. ի օրով գու-
մարուած Դունայ ժողովի 22 կանոնն ամբողջապէս նուի-
րուած է ազապների կանոնադրութեան †**.

Յագապս մատուս մի բարձցին, ըստ սրբոյ կանոնին, այլ
աղքատաց տայցեն ի նմին ժամույ անդիման ազապսանն»:

* Հայոց եկեղեցական իրաւունքը. Ն. վ. Մելիք-Քանդեան.
Ա. 1903. Շուշի. եր. 539:

** «Մասնականաւ» Չեռ. 740:

*** Բնագիրը փշացած է այստեղ. ձեռագիրների մէջ շատ
տարբերութիւններ կան, օր. № 740. «զհաց տօնին որ էանցն»,
№ 759 «զհաց նորին տաւնեացն» № 761. զհաց տաւնին աւ-
րեացն.

† Մելիք-Քանդեան եր. 545.

†* Համ. Դունայ Բ. ժողովի 23 կանոնը ս. Սահակի Լ. կա-
նոնի հետ:

Անդ. 383 և 539.

†** Անդ. 382.

Յոհան Օձնեցին իւր կանոնների մէջ պատուիրում է. «զազն օրհնութեան յագապացն զեկեղեցիս խառնել»:

Պարտաւի ժողովի ժԸ. կանոնից երևում է, որ ազապներ են կատարւում «ի հանգիստ» ննջեցելոց*:

Մէջ բերած վկայութիւններից պարզ է, որ ազապ բառը դործադրուած է նախ սկզբնական՝ սիրոյ կամ հասարակաց ճաշի իմաստով և ապա փոխաբերաբար ազապ են կոչուած և այն կենդանիները, որոնք նուէր են բերուում նոյն նպատակի համար: Զատկին մատաղ անելու սովորութեան մէջ նոյն ազապի մնացորդներն են նշմարուում: Ներսէս Շնորհալին, թէպէտ մատաղ և ազապ բառերը չի նոյնացնում, բայց ս. Սահակի կանոնների յիշատակութեամբ և տուած բացատրութիւններով միանգամայն պարզւում է, որ այդ իմաստով է նա հասկանում մատաղի սովորութիւնը**։ Մատաղ անելու սովորութիւնը յիշուած է նաև արձանագրութիւնների մէջ և այն էլ Շնորհալուց առաջ***:

Մեր ժողովրդական ներկայ կեանքի մէջ ևս կան հին ազապի մնացորդներ որոշ տեղերում: Իմ հայրենի Մարաղա զիւղում †՝ Գանձակի նահանգի Զիւանշիր գաւառում, մինչև այժմ էլ մեծ պասի տնտեսի կիրակէին, զատիկ և ս. Խաչի մեռելոցներին հասարակաց ճաշեր են լինում, որին մասնակցում է ամբողջ զիւղը: Իւրաքանչիւր ընտանիք, հարուստ և աղքատ, կարողութեան չափ, ժամի բաժն է բերում եփած կերակուրներ, հաց, զինի, միրգ: Բոլորովին աղքատներն ազատ են, ի հարկէ, այդ պարտքից, բայց մասնակցում են ճաշին անխտիր: Մտաւորի տակ հացի են նստում տղամարդիկ և կանայք, անձրեային եղանակին նոյն իսկ եկեղեցու մէջ: Հասակաւոր կանանցից մի քանիսը տնտեսութիւն են անում, իսկ երիտասարդները սպա-

* Անդ. եր. 434.

** Ընդհանրական, 1865, ս. էջմիածին. եր. 351, 352, 363, 364, 365.

*** Զալալեան Բ. 49.

† Պարսկաստանից են գաղթել 1828 թ.

սաւորում են: Առանձին ուշադրութեան են արժանանում պանդուխտներն ու աղքատները, ճանապարհորդները:

Կան և ընտանիքներին յատուկ հասարակաց ճաշեր և պատարագներ: Որոշ ընտանիքների համար աւանդութիւն է դարձած տարուայ մէջ մի յատուկ օր պատարագ մատուցանել տալ քահանային ի յիշատակ իրենց ննջեցելոց և պատարագից յետոյ ճաշ տալ հասարակութեան՝ մեծ կամ փոքր չափով՝ նայելով կարողութեան: Մեզ չպէտք է շփոթէ այն հանգամանքը, որ այս ճաշերը կապուած են ննջեցելոց յիշատակի հետ. Բ. և Գ. դարերի ազգայների մէջ ևս ննջեցելոց յիշատակին նուէրները կարևոր մասն են կազմում համայնքի գանձարանի եկամուտների շարքում:

Ներկայումս մ'տող են կոչում. ոչ միայն զոհի կենդանիները, այլ և հասարակաց և աղքատների համար թխուած և փողոցներում բաժանուած հացը: Սորա մի այլ տեսակն է գաթայի մատաղը, որ ու տեսլը տանում, յանձնում է շաբաթ երեկոյեան երեսփոխանին, իսկ նա էլ քահանային բաժին հանելուց յետոյ՝ մնացածը կտրատում է և բաժանում ժամուորներին աւետարանը համբուրելիս: Այս վերջին տեղեկութիւնը ինձ յայանեց իմ մօրեղբայրը՝ Տ. Անտոն վարդապետ, որ մեր համագիւղացին է:

Այս չափս կնքծում ենք, բաւական պիտի համարուի հաստատելու, որ ազգայի կամ սէր անելու հաստատութիւնը Ժ.Կ. դարում Հայոց եկեղեցու մէջ նորութիւն չէր և կապ չունէր քաղկեդոնականութեան զօրանալու հետ:

Գարեգին վարդ. Թովսէփեան